

ԱՆՆԱՆՈՒՄԻ ՊԱՏՄԱՆԸ
(Բաղախմու ղեկավարը)

Ես մի փոքրիկ խանութ ունեի Միրզոբեյի հանքի և Բաղախմու գիւղի միջև. վաճառում էի խմիչքներ, ուտելիք և այլ մանր իրեր: Ուղիղ 10 տարի էր ես այդ խանութումն էի: Ես բնակվում էի Բաղախմու գիւղում, մի թուրքի տանը, որին և պատկանում էր խանութս: Տարեկան ես այդ թուրքին միայն քրէհ տալիս էի 600 ռուբլի, բացի նուէրներն ու հիւրանքները:

Փետրվարի կարմիր օրերին իմ տանուտէնը ինձ և ընտանիքիս պաշտպանեց. մենք ողջ-առողջ մնացինք և խանութս էլ անփաստ, թէ-և նա կողոպտելու համար շատ յարմար տեղ էր—կապած էր Բաղախմու գիւղին:

Երբ այս անգամ էլ հրաձգութիւնն սկսվեց, տանուտէրս առաջարկեց գնալ իր մօտ: Իսկոյն ես համաձայնվեցի, առանց կասկածելու, որովհետև մի անգամ արդէն տեսել էի նրա արած բարոյութիւնը:

Պէտք է ասեմ, որ թէև փետրվարի օրերին մենք անփաստ էինք մնացել, բայց խաղաղութիւնն ընկնելուց աչես, ես հետաքրքիր իմ ընտանիքս և մնացի մեկտեղ, ես համոզված էի, որ թուրքներն ինձ ձեռք չեն տալ, որովհետև ես նրանց հետ «աշխատ» էի միշտ, նրանց հետ էի նստում կանգնում, նրանց հետ բոլորովին մերվել, համարեմ ձուլվել էի:

Երբ տուն հասաք, տանուտէրս յայտնեց, որ այս անգամ առաջնայն նման չէ լինելու, այլ չափազանց ուժեղ, մի ուրիշ բան—հեծանք է լինելու:

Դեռ նախ քան Բաղախմու սկսվելը, ես հարցնում էի ծանօթ թուրքերին, թէ իրանք ինչպէս չեն սկսում. պատասխանը լինում էր միշտ մի և նոյնը. «...այս...ինչին ուղարկել ենք քաղաք Գ. բէկ Ս. Աւի մօտ և սպասում ենք նրա բերած պատասխանին»:

Տանուտէրս սպասական խօսքերը, թէ այժմ «համան է լինելու», վախեցրին ինձ: Դեռ քանի հրաձգութիւնը նոր էր, գնացի Միրզոբեյի հանքը, հայերի մօտ ապաստանելու, բայց երբ այնտեղ յայտնեցի, որ երկու հայ ընտանիք էլ կայ իմ ընկալիքները, որ ինձ իսկոյն ինձ յետ ուղարկեցին, որ գնամ այդ ընտանիքներին էլ առնեմ զամ Միրզոբեյի հանքը: Արագ յետ գնացի, հայ ընտանիքներին և մի հայ դերձակի էլ, որ արդէն եկել էր մեր բակը, համոզում էի ինձ հետ միասին գնալ Միրզոբեյի հանքը, հայերի մօտ ապաստանելու, երբ հրաձգութիւնը սաստկացաւ և այլ ևս անհնար եղաւ դուրս գալ փողոց, թուրք խուժան արդէն քաղաքից նրանց էր ստացել յիշված բէկից և թափվել էր փողոց զինված, կազմ և պատրաստ իր դիմադրանքի համար:

Սկզբում թուրքերը նկատել էին մեր դերձակ ընկերոջը և վրա տուել, որ գնդակահար անեն, բայց տանուտէրս մայրը կանգնեց թուրքերի առաջ և աղաչեց, որ այդ մարդու արեւն իրան նուրբին և դա իր համար կը լինի մի «Մէշէդ ուխտ գնալ»: Թուրքերը խնայեցին պառակտ աղաչանքին և մենք փրկվեցին:

Մի քանի ժամ անցած, տանուտէրս, որի փոքր ըրդին (մօտ 28 տարեկան) էր միայն մասնակցում թուրք կոմիտէի սարքած այդ հրէշաւոր խաղերին, տան դուռը փակեց մեզ վրա և ինքը, կինը և մեծ որդին գնացին իրանց այգին, որպէս զի թուրքերը, բաց տեսնելով տուռը, չը կասկածեն թէ հայ են պահել իրանց մօտ:

Փակվեցինք տանը և 4 օր մնացինք: Չորս օր: Ասեմ ինչ է հեշտ: Իմ ամբողջ կեանքում ես այնքան չէի տանջվել, որքան այդ 4 օրում:

Լուսամուտի ու դռան ծակերից մենք անդադր գիտում էինք փողոցը: Սկզբում թուրքերը հաւաքվեցին Բաղախմու մեծ հրապարակի վրա. մի մօլա քարոզ խօսեց, մի ուրիշ անձ ձառ խօսեց, իսկ ամբողջ անդադր պատասխանում էր «հա Ալի» գոչելով:

Ամբոխին այդպէս զբոսնելուց յետոյ, առաջ-նորդեցին նրան ուղղակի Միրզոբեյի հանքի վրա, բայց նրան շատ զոհեր տուին, որովհետև յետ փախան և երկու օր շարունակ վախենում էին գիւղից դուրս գալ, յարձակում գործել:

Իմ աչքերով տեսնում էի, թէ ինչպէս թուրքերը տանում էին սկզբում կոտորած հայերի դիակները, տանջանքներ մէջ սպանում հայ վերաւորներին, իսկ յետոյ, Միրզոբեյի վրա գնալուց յետոյ, սկսեցին լաց ու աղաղակով տանել իրանց սպանվածներին:

Սկսվեց մի կողմից հանքերի հրդեհը, իսկ մի կողմից կողոպուտն ու թալանը: Տանուտէրս որդին, ոտից գլուխ զինված, օրը մի երկու անգամ գալիս էր տուն աչքերն արեւ-նով լցված և պատմում օրվայ դէպքերը: Նրա պատմութիւնից մենք ստուգում էինք...

Ահա նրա պատմութիւնից մէկը: Գալուստ անունով հայի կրթելի հրացանի 5 գնդակ ցցեցինք և դիակը տարանք նետեցինք Բաղախմու այրվող վիշակներից մէկի կրակը: Վերադառնալով դեռ մեռած չէր. նա ոտի ելաւ կրակի այրել-լուց և ուղևուղ էր փախել: 3 նոր գնդակ նստեցին նրա ցաւատանը մարմնում և ոտի կանգ-նած զոհը նորից գլուղեց, գետին ընկաւ ու այրվեց:

Երբորդ օրը տանաւորն ուրդին եկաւ և ուղեց խանութիս բանալին: Ստիպված էի տալ: Առաւ գնաց և մի քանի քաղ յետոյ ես աչքովս տեսնում էի, թէ ինչպէս թուրքերը տանում են իմ խանութի ապրանքը, իսկ խմիչք-ները բաժանում գիւղում մնացող մի քանի կասկածելի ուսու կանանց... Իմ աչքովս տեսնում էի 10 տարվայ աշխատանքիս արդիւնքի ոչնչանալը, իմ անանկանալը և ստիպված էի լսել: Տեսնում էի թէ ինչպէս տանաւորս ուրիշ որդիները բերում էին կողոպուտի իրեր իրանց տանը և պահում, որ գնել են փողոցում, օրինակ 30—40 ռուբլիանոց իրը—մէկ ռուբլով կամ 1 ր. 20 կոպէկով: Տանաւորս մեղք էր համարում կողոպուտին մասնակցելը, բայց փողով գնելը նրա համար մեղք չէր: Նրա որդին մի անգամ եկաւ և ինձ հետ 200 ռուբլի փոխ խնդրեց... Բայց ես յայտնեցի, որ 20 ռուբլի ունեմ մօտս—10-ը իրան, 10 էլ ինձ, և նա տարաւ այդ 10 ռուբլին կողոպուտի իրեր գնելու:

Վերջապէս չորրորդ օրը երեկոյան մեզ յայտնեց տանուտէրս, որ պատրաստվենք գնալու, որովհետև այլ ևս պահելն անհնար է, հարևաններն իմացել են:

Երեկոյան ժամը 9-ին, մթնով մեզ տոռ-նորդեցին մինչև Բօլորայի բլուրի հարաւային լանջը և իրանք, տանաւորն զինված որդին ու իր 2—3 ընկերները՝ յետ դարձան գիւղ, թողնելով մեզ բաղդի կամօրին:

Սկսեցինք մինչև Բաղախմու ընդամենը 6 վերստ հազել լինի, բայց մենք մօտ 7 ժամ քայլեցինք, որովհետև անվերջ ձահձահներ և Բաղախմու թուրք գիւղի երկուցը մեզ ստիպում էին անապին պոռոյանք անել: Մեր ընկերներից մէկը միայն սպիտակեղէնով էր մնացել. նրա ոտերը քարերից ու քղերից, փշերից ու չորացրած խոտերից ծակոտվում էին: Ստիպված եմ եղել հանել իմ սպիտակեղէնը, փաթաթել նրա ոտերը և զբաղել ազատել տանջանքներից:

Վերջապէս ցնխոտված մինչև ծնկներից վեր, պատառուկված և ուժասպառ հասաք Բաղախմու կայարանը: Հերթապահ ժանդարմը խճաց մեզ վրա և այդ վիճակի մէջ մեզ ընդունեց դահլիճը, խորհուրդ տուեց նստել յատակին, որ լուսամուտներից չը տեսնեն թուրքերը—եթէ ոչ կորոզ են սպանել: Մենք այդպէս էլ արեցինք:

Լուսացաւ: Եկաւ գնացքը: Մօտս կար միայն 10 ռուբլի: Գնացինք կայարանի գլխավորի մօտ: Դա մի վրացի է. խնդրեցինք, որ մեր այս դռան վիճակում մեզ մի ճար անէ, հնար գտնէ ուղարկել Գանձակ ու Թիֆլիս: Բայց այդ մարդասէր ողորմած անձն սկսեց մեզ փողոցային խօսքերով հայոյնի փոխանակ օգնելու... Մահի ձերբանկութիւնը հաշիւ ազատված անձեր—այդ հրէշը մեր երեսին շարժեց հետեւալ բառերը. «ձեզ տեղն է, այդպէս էլ պէտք է»: Եթէ որ և է զէնք լինէր ձեռքիս, այդ քաղ-ին գուցէ եւ ընդունակ լինէի այդ հրէշին սպանելու...

Իմ ունեցած 10 ռուբլիով մի կերպ հասանք 4 հոգի Թիֆլիս: Գրկին օրհնվին հասարակ կոնդուկտորները (վրացի և ուսու), որ 10 ռուբլով բերին չորս մարդ:

X. X.

ԿՈՏՈՐԱԾԸ ՇՈՒՇՈՒՄ

Սեպտեմբերի 8-ին

Այս գիշեր Երևանի գետերի առաջ հրապանաձգութիւն էր... Չառաւոր թուրքերը Դա-րբաղի վրա մացառոտներից հրացան էին ար-ձակում. իսկ գիշերապահ զօրքն առանց պատասխանելու քերծի ձակաւորն սպասում էր նրանք մօտենալուն, բայց չը մօտեցան:

Առաւօտը տանից դուրս գալով՝ անցնում էի կուսանոցի առաջից, տեսաւ պարսպի տակ, նեղ փողոցում, հաւաքված բաւական մարդիկ, կիներ ու երեխաներ ճճվում էին: Մօտեցալ—

Երկու տան նեղիկ խորշերում թափված էին փախանք, որոնց ըրքրում էր հաւաքված մարդերը: Մէկ մէկ բարձրացնելով և ցոյց տալով—ահա կարճակն, ահա դերձակ, ահա զին-չարսաւի կտոր՝ բոլորը թուրքի կնկայ շորեր: Իսկոյն մարդ ուղարկեցինք ոստիկանապետի և քննիչի ետեւից: Չը գիտեմ եկան և արձանա-գրութիւն կազմեցին, թէ ոչ: Բայց ինչ էր այդ—Երեկոյան ժամը 11-ին տեսել են եր-կու թուրքի իշխելիս հարեան փողոցով: Հար-ցրել են—ճարադէպ էր գալիս—Մեծի կայաց... պատասխանել են թուրքերը: Հայերը հեռուա-քաղ տալով հետեւել են դրանց, որոնք այլ ևս չեն կարողացել իրանց դժոխային նպատակն իրագործել, այլ թափել են փախանքը և հե-ռացել... Այս էլ երէկվայ թափօրեց և հայերի կողմից Շէյխ-ու-Իսլամին ճաղ տալուց յետոյ...

Թուրքապետն աւելի յուսակաւոր լուրեր... Աղաւաղում հայ ճանապարհորդներին, 30 հոգի, կոտորել են: Գիտե՛մ և կոտորած—հիւսիսեան օր-օրէնքում և մարդկային օր ցեղի մէջ տեսնված բան է՝ չը կուտայ, անգէն, անգոր զերիններն օրերով պահել և կոտորել: Ահա Աղայիվ բէ-կերի դատաւարական ժողովուրդ, ահա կա-տաղի բարբարոսութեան վերջին թոյն: Թող հրճվեն մարդ-գողանքները, թող լսէ Եւրօպան, որ կայ մի աղք, որը մորթում է իր պաշտ-պանութեան ապաւինած գերիներին և այդ ազգը ապրում է Եւրօպայի սահմաններում...

Այսօր քաղաքի բերին Ամարասի. Ս. Գրիգոր-իսի մասնաճիւղները: Եւ Բիվ էր բերողը. միթէ անաշխուղ կամ վարդապետը, որոնց ոչ մէկը լայնի չարաւ այս արեւնոտ օրերին գիւղա-կան ժողովուրդի մէջ դուրս գալ ու միջթաքել նրան. ոչ, այլ մի պատուական հայ՝ Նիկոլայ Հախումեան, որն անվիշեր կերպով գնաց կրա-կի առաջ հայոց յախշտակված հիւսիսեանների և սրբութիւնների սերունդ: Պատիւ նրան:

Շէյխ-ու-Իսլամը և քաղաքի պատգամաւոր-ներն այսօր գնացին Աղաւաղ գետ. հաւանազա-պետի հետագիւր համաձայն: Իբր թէ վաղը, ամսիս 9-ին, հանդիսաւոր հաշտութիւն պիտի կատարվի: Աղաւաղի խուժան և հաշտութիւն-ի մէջ հետ, հայի կտոր չը կայ այնտեղ: Հաւա-տանք աչքնակալութեան, որ խաղաղ ժողովուրդի համար միշտ նորանոր թշուառութիւններ էր-դուռ է բաց անում: Չէ, խնայեցե՛ք մարդկա-յին անմեղ արեւը և մտածեցե՛ք գնանք ար-մատական, փրկարար միջոցը:—Պատիւ, պա-տիւ և պատիւ...

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՒԱՌՈՒՑ

Դա մար լու (Երևանեան հանգ) գիւղից մեզ գրում են օգոստոսի 31-ին. «Երևանում գիւղի ներքին թաղում հայ և թուրք ապրում են խաղա, հայերի մեծամասնութիւնը կազ-մում են երկրագործները, որոնք այժմ ձեռ-քերը ծաղած, յուսահատ կերպով ողորում են իրանց դառն վիճակը: Գիւղի վարեմարտիցը գտնվում են մօտաւորապէս 4—6 վերստ Գի-չիկ-Վէդի և Դարալար թուրք գիւղերի սահ-մաններում: Գիւղի Վէդի գիւղի կատաղած ընտանիքներն էին, որ անայտապահ լարա-լու գիւղի ծխական բահնային և նրա երկու ուղեկիցներին, իւրեցին երկաթուղու գծի պա-հապան գիւղերի ձեռքից հրացանը. նոյն այդ Դարալար գիւղի ընտանիքներն էին, որ օրը ցերեկով սրախողոտող արին երկաթուղու գծի բանուր վեց հոգի հայ ժողովուրդը դարբանեցին ներքին: Ժողովուրդը՝ այդ աւաղակ թուրքերի երկիւղից դեռ չէ արել մի ահօս վար, դեռ չէ ցանկել մի հատիկ ցորեն և յոյս էլ չը կայ ցա-նելու: Միակ յոյսը խաղողն էր, բայց այն էլ «չախտայ» հիւսնաութիւնը փչացրեց: Առե-աւորը նոյնպէս խանդավառ է, վաճառական-ները անգործ են մնացել, նրանք չեն վստա-հանում իրենց ապրանք տանել, իրանց խա-նութիւնը թուրքերի հետ խաղը լինելու պատ-ճառով: Չը նայած, մեղանում միշտ շրջում են գիւղերում, բայց այնու ամենայնիւ թուր-քերը յուզված են և միշտ առիթ են փնտրում կռիւ սարքելու: Նրանց աղբիցիկ անձինք շա-րունակ շրջում են շրջակայ թուրք գիւղերը և զրգոտում հայերի դէմ: Այգիները տանող ճա-նապարհի վրա գտնվում է հարուստ թուրք Արմաղաթ Դաֆար-օղլու երկաթական տունը, որի վրա շինված է ամուր դերը. այս ճանա-պարհով գնում են հայերը մեծ սարսափով և հայերը բողբոջեցին գաւառապետի օգնականին, բայց միւս օրը Դաֆար-Հասան օղլին ևս նոյն-պէս շինեց իր երկաթական տան վրա, որի մօտով անցնում է հայերի ճանապարհը գէպի շուկան, և ուրիշ շատ շատերը: Այս գիշեր Մերհարու հայ գիւղի ջրաղացներում, թուր-

քերի քսան հոգուց բաղկացած խումբը սպա-նեց արեւ աղացող մի հայի Իւլայ գիւղից: Նոյն այդ խումբը, գիշերով յարձակվում է մէկ ուրիշ ջրաղացի վրա, ջրաղացատում և սկսում քանդել պատը որպէս զի ներս մտնեն, բայց այնտեղ արեւ աղացող դաւա-լուխցի Հայկ Նազարեանը սկսում է շարունակ աւարճանակի հարուածներ հասցնել և չէ թող-նում ներս մտնեն. նոյնպէս հրացաններ են արձակում թուրքերի կողմից, բայց այդ ժա-մանակ մօտակայ հայ գիւղից, Չորհարուից, գալիս են օգնութեան, թուրքերը թողնում փախչում են, և այդպիսով աղաւաղում է ջրա-ղացի վեց հոգի հայերի կեանքը:

Ա. Տ. Խաչատրեան

Փառաւկա (Հին-Նախիջևանի գաւառ) օ-գոստոսի 25-ին: Յուզմունքը թուրքերի կող-մից օրէցօր սաստկանում է: Այժմ թուրքերը ծրագրեցին փոխել են և որովհետև իւրաքան-չէր գիւղում զրված են գիւղերները, այլ ևս հայ գիւղերի վրա չեն յարձակվում, այլ ա-ւաղակային խմբեր կազմած՝ քրոջ են հայ գիւղացիներին տաւարը, ոչխարը և մարդկանց: Ահա ինչպէս:

Օգոստոսի 13-ին 7 հոգի հայեր արաւ հըն-ձում են. վերադառնալիս մի խումբ գիւղում թուրքեր յարձակվում են անգէն հնձուր հայե-րի վրա, դրանցից 4 հոգի կարողանում են փախչել, իսկ 3-ին՝ Խաչատուր Սամուէլեան-ցին, Խաչատուր Դուկանեանցին և Վարդան Անդրեասեանցին բռնում տանում են իրանց 4 ձիերով, որոնք բռնված էին ցորենի խու-ճերով: Դէպքը պատահեց երեկոյան ժամի 6—7-ը: Ձիւնորները չը գնացին, պատճառ-բերելով թէ մեզ հրամայված չէ գիշերը ոչ մի տեղ գնալու: Առաւօտեան գիւղերները գնա-ցին. գիւղացիք հետքը տարան մինչև Թեւի թուրք գիւղը, բայց գիւղը չը համարձակվե-ցին մտնել: Վերադառնալով դէպքի համար մի պրիստաւից ուղարկվեց մի ուրեմադիկ և պի-ստրածինիկ, որոնք վերցրին մեր Փառաւկայից 2 թուրք, 2 հայ և Փառաւկա գիւղի տանուտե-րի օգնականին ու գնացին դէպքի տեղը տես-նելու, թէ հրէ են տարել ամսիս 13-ին ան-յաւացած մարդկանց: Ամսիս 17-ին, կէսօ-րին, յիշեալ մարդիկ և ուրեմադիկը հասնում են դէպքի տեղը թէ չէ, թուրքերը նախօրը գիւղը բռնած՝ յարձակվում են ուրեմադիկի վրա. ուրեմադիկը տեսնում է, որ չէ կարող դիմադրել, մանաւանդ, որ թուրքերի տեղը բարձր, իրանք էլ շատ և բոլորը զինված բերդան հրացաններով, իսկոյն և եթ տոռանկ է գրում Փառաւկայի գիւղացիների վզովքներին, որ օգնութեան գալ: Մի ժամից յետոյ 8 զինուոր տեղ են հասնում և տեսնելով որ թուրքերի տեղը բարձր է, չեն դիմադրում, այլ թողնում դառնում են Փառաւկա գիւղը, իսկ ուրեմադիկը գնում է Թեւի գիւղը: Նոյն օրը լուր է հասնում գիւղերի թէ թուրքեր հնձում են մեր Փառաւկայի ցորենի արանքը. 3 զինուոր ձիերով մի մարդու հետ ուղարկե-ցին, որ թուրքերը յետ տան. գիւղերները հասնում են տեղ թէ չէ, գիւղում թուրքերը յարձակվում են գիւղերների վրա. գիւղերները թողնում են 2 գիւղացիներին ձիերը և իրանք փախչում, գալիս գիւղը, յետոյ մնացեալ գիւ-ղերները գնացին ձիերը բերելու, բայց ար-դէն ուշ էր, թուրքերը տարել էին: Հայերը տեսան, որ ցորենները հնձում տանում են, բոլորը միասին ամսիս 19-ին գնացին գիւղի մի կողմը հնձելու և իրանց հետ վերցրին 2 զինուոր պատրու: Հէց սկսում են հոնձը թէ չէ, թուրքերը գիւղում յարձակվում են հըն-ձուրներին վրա, գիւղերները պաշտպանում են հնձուրներին, մինչև գիւղից օգնութեան գնա-ցին մնացեալ գիւղերները և ունեցան թուր-քերի հետ բաւական հրացանաձգութիւն: Թուրքերից սպանվածներ և վիրաւորներ վան, հայերից ոչ ոք: Բօլք առ բօլք սպանվում է թուրքերի յարձակման. դրութիւնը վտանգա-ւոր է:

Միտաւոր Փառաւկայ գիւղի՝

Սարգիս Բաճ. Տէր-Սարգսեանց

ԱՂԻԱՄԻ ՕՂԵԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՅՐԱՎԵԼՈՒ

ԱՂԻԱՄԻ

Այժմ մեր հարեան թուրքերը, երբ և ուր ոյժը պատում է, աշխատում են քնատել հայե-րին: Երբ զէնքով ոչնչն չեն կարողանում ա-նել, դիմում են կրակին: Նրանք ամբողջ ցե-ղով հրճելներ են դարձել. դրան ապացոյց Շուշին, Բագուն և Աղաւաղ: Թուրքերի այդ թշուառական արամադու-թիւնը դեռ երկար կը մնայ: Թող Աղաւաղ հայ

օղեգործարանատէրերը լրջօրէն մտածեն այդ երևոյթի մասին, նախ քան կը սկսեն իրանց գործարանները նորից կառուցանել: Եւ խորհուրդ եւ տալիս, որ իրանց գործունէութեան ասպարէզը՝ տեղափոխեն այն հայ գիւղերը, ուր խողովը ու թուփը պակաս չեն Աղլուս թուփը գիւղի բերքերից: Հէնց, օրինակ, Կարաչինար գուտ հայաբնակ գիւղը, առ և շրջակայ ուրիշ հայ և մարական գիւղերն ունեն մօտ 400 դեռնատի խողովի վազեր, չը հաշուած թիֆլիսները:

Երբ այս կողմերում օղե գործարան կը կառուցվի, այն ժամանակ խողովի մշակութիւնը աւելի ծաւալ կը ստանայ, և հայ գիւղացին էլ կը շահվի դրանից, ինչպէս և գործարանատէրերը: Երկաթուղու գիծն աւելի մօտ է Կարաչինարից, քան թէ Աղլուսը Եւլախից: Կարաչինարը 30 վերստի վրա է գտնվում Գեօրան կայարանից և 35 Գանձակ քաղաքից:

Թող գործարանատէրերը իրանց գործակալներին ուղարկեն այս կողմերը՝ ուսումնասիրելու այդ գործը: Եւ համոզված եմ, որ ներանք յարմար կը գտնեն այդ գիւղում օղեգործարան բանալու միտքը:

Միւթար

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԵՄԲԱԿՐՈՒԹԱՆ

«Трудъ и Листокъ» լրագրի մէջ տպված է հետևի վրա բաց նամակը «Հայաստան»-ի խմբագրի Անձէր բէկ Աղլուսին:

Ձեր խմբագրած «Հայաստան» № 55-ում, դուք նորից զայբանալով ինձ դէմ, հաճել էք գետնի վրէժը գրչի մօտաւորապէս հետեւեալ մարգարէները: «Յայտնի է, որ Նախիվանի և Երևանի դէպքերի մասին շատ թղթակցութիւններ գրվում էին պ. Յարութիւնեանի և նրա համախոհների ձեռքով թիֆլիսում: Բայց բանը նրանումն է, որ պ. Յարութիւնեանը ապրելով թիֆլիսում, տնից դուրս չէր գալիս... Ապա դուք, պ. Աղլուս, խօսելով «Հայաստան» նոյն համարում Մէհտի Ղուլի բէկ Կէնգիւրիսիւնու սպանութեան մասին Բաթումում և վերադարձի վրա գրած հոդուածները, տանք մտորէն ընդ բացակայում էք: «Միթէ այսուհետեւ ևս մեր մանկեղան հասարակական գործիչները պէտք է զոհ դառնան»: Կասկած չը կայ, որ դուք ասելով թէ ես տնից դուրս չէի գալիս (այդ սուտ է) ամենեւին չէիք ուղում յայտնել, որ իբր Երևանում և Նախիվանի գաւառում տնից ունեցած դէպքերի մասին անդեկութիւններ հաղորդելու համար ես պէտք է այնտեղ լինէի, մանաւանդ որ ես գրել եմ ոչ իբրեւ դէպքերի ակնաստես, այլ թիֆլիսում ստացած արժանատիւ լուրերի հիման վրա, և մեծ մասամբ ցոյց էի տալիս նրանց աղբիւրները: Այդ պատճառով ձեր թղթակցի ակնարկները, պ. Աղլուս, ինձ իբրեւ մի քանի տարի ապրողի Բաթում, ուր երդուեալ հաւատարմատար Ստարոսելսկու սպանման օրից (այդ կարծիքն ասում տարի առաջ էր) հաստատված է վարձկան մարդասպանների գրասենյակի գոյութիւնը, շատ հասկանալի են:

Եւ կարծեմ, որ եթէ մէկը կարող է հետաքրքրվել և տեղեկութիւններ հաւաքել թէ արդեօք ես դուրս եմ գալիս տնից թէ ոչ, դուք կարող էին լինել միայն վարձկան մարդասպանների գրասենյակի ելք, պ. անդամները: Այդ դէպքում բարի եղէք, պ. Աղլուս, պատասխանելու ինձ, ինչպէս է լինում, որ դուք լրագրի խմբագիր, հասարակական գործիչ, որը իրան պարտաւոր պէտք է զգայ կոչել ամենքին դէպի խողովութիւն, բարութիւն, լոյս և ճշմարտութիւն, կարողացաք իմանալ, արդեօք դուրս եմ գալիս ես տնից թէ ոչ, ամառանալ, որ ես ապրում եմ թիֆլիսում իսկ դուք Բաթումում:

Մարդ ստեղծ է այդ տեսակ հասարակական գործիչներից. մարդ ցաւում է և այն ազգի համար, որ նայում է ձեզ վրա իբրեւ ղեկավարի:

Արդեօք տխրահռչակ Կրուչիւմսկի դափնիները ձեզ հանգստութիւն չեն տալիս:

Ս. Յարութիւնեան

ԲԱՅՈՒՆ ԵՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին

Ներկան անմիջապէս, ապագան անորոշ ու յուսահատ, ահա մեր կենքի պատկերը:

Վերջացան մասսայական թալանն ու կոտորածը. միաժամանակ դադարեցին հրացանի պայթիւնն ու թշուառների որոտը. դրանց փոխարինեց սառն պողպատը—դաշոյնը: Վերջացած կարծիքով կոտորածը և թշնամութիւնը դադարած, անհոգ կերպով անց էք կենում

փողոցով, բայց յանկարծ դաշոյնի մի հատուածը վերջ է տալիս ձեր կեանքին: Գանի դանակը յիշենք, երբ մարդիկ մեր կամ մէջ մտնել: Պահանջում են երկու երեք ամսվայ լուրջ, իրանց ֆրանսիեր հատուցումը և այլն: Այո, եղբայրներ, գիտեմ, որ կօպէկն անգամ ձեզ համար նշանակութիւն ունի, բայց միթէ այդ կօպէկները կը դարձան ձեր ցաւերը, միթէ մի 2 ամսվայ ուժեղով ձեր ցաւերին ձար կանէք: Ձեք որ մի երկու ամսից դարձեալ նոյն անփող, անգործ բանւորն էք լինելու: Պիտի նստեցէք ձեր տեղերում: Արդարեւ թիւնը, իրաւունքը և հատուցումը փախուսաւ չէն վատաւորում, այլ անդու ու յամառաշխատանքով, ուժեղ գիտաբանութեամբ: Ինչ կօպէկներին խօսք կարող է լինել երբ մէջտեղ կամբողջ հայութեան գոյութեան հարցն է դրված: Մի քիչ լուրջ լինենք, լայն շրջահայեացք ունենանք կատարվող դէպքերի մասին: Ոչ, թողէք այդ անօգուտ երկրորդական պահանջները: Աշխատենք պահել մեր ձեռքում այն տեղը, առանց որի ապրել չենք կարող: Եթէ խնդրելու է խնդրենք, պահանջելու է պահանջենք որ դուք տեղը մեզ չաղանեն, չը թալանեն, որ մեր տարիները աշխատանքը զանազան աւաղակներով բաժին չը դառնան: Պահանջենք որ մեզ չը զրկեն ապրուստի միջոցից, որ ամեն մեզ կեանքի, գոյքի և պատուի ապահովութիւն:

Միջ թալանեցին, կոտորեցին և դարձեալ մեղաւոր դուրս եկանք: Ասում են մեզ բոլորը և մեր հակառակորդը և ուրիշները: Ինչո՞ւ, ինչո՞ւ են հետեւ քաշվում մեզանից բոլորը: Միթէ չէք յիշում այն օրերը, երբ ամեն բան թողած ոչխարի պէս փախչում էինք միայն մեր դուրսն աղաւթելու համար, երբ ամենամանաւ գուրթ մարդն անգամ կը խղճար մեզ վրա, մեր առաջ բոլորն էլ փակեցին իրանց դռները, այն մարդիկ՝ որոնք խաղաղ ժամանակ մեր ամենամտերիմ բարեկամներն էին հաշուում իւրանց: Ինչո՞ւ—որովհետեւ հայ էք, ասում էին մեզ: Երեւաններն անգամ ծիծաղում էին մեզ վրա, նախաւորած մեզ: Ոչ մի կարեկցութիւն, ոչ մի օգնութիւն, կարծէք թէ այս աշխարհի խորթ զաւակները լինէինք մենք: Կրկնակի զնով անգամ չէին թոյլ տալիս մեզ տներ վարձել, ապրել, որովհետեւ հայ էինք:

Գաղութը շատ ունենք, փախչելով բան չի լինի: Պէտք է մնանք մեր տեղում ամառն մեր ցաւերի, հոգիների մասին, բարեկալի մեր վիճակի, օգտվել անցեալի սխալներից: Բաւական է ինչքան արցունք թափեցինք, ինչքան զոհեր տուցինք: Գոհե՛ք այժմ մի քիչ լինելով դանք: Միանք մեր տեղում և եթէ ապրելու իրաւունք ունենցող մի ազգ ենք, եթէ արեւ մեզ համար էլ է ծագում, մտածենք մեր վիճակի մասին և մեր անցեալի սխալները ի նկատի ունենալով, ապագայի մասին մտածենք: Միջ փախչել: Փախուստը կորուստ է:

Մշակ

ԲԱՆՈՒՄԱՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Անգլիական «The Daily News» թերթը իր սեպտեմբերի 9-ի (ն. տ.) համարում մի մեծ առաջնորդող է հրատարակել «Տօկիօյից թիֆլիս» վերնագրով, որի մէջ ասում է.

«Բազումից ստացված կարևոր լուրերը ոչ մի կասկած չեն թողնում, որ Ռուսաստանի այդ ստիպական բարգաւաճեալ նահանգը մի մեծ աղէտի է ենթարկվել: Կովկասի նշանաւոր նաւթագաւորները վերջերս բանտարկան մեծ խառնակութիւնների ասպարէզ էին դառել, բայց այս անգամայն անկարգութիւնները անհամեմատ չափաւորացում են նախորդներին: Մասնաւորապէս թալանները յարձակվել են հայերի վրա, որոնք թույլ աւելի քիչ են, և երբ մի կողմից կոտորած կար, միւս կողմից էլ հոգեհաճութիւններ կրակ են տուել նաւթագաւորներին, որոնցից կախված է երկու ցեղերի էլ բարօրութիւնը: Արդեւանքները անհամեմատ ասում են, ոչնչացած է տոնկալի ֆրանսիերի են ենթարկված նաև անգլիական ֆիրմաները: Հարուածը թէն յանկարծակի է իշխեցած, բայց նա պատրաստված էր վաղուց և ճիշդ ժամանակին է հասել: Այս դէպքերի մէջ մենք տեսնում ենք նշաններ մի խնդրի, որի աղբիւրը Ռուսաստանից դուրս է: Բացարձակ կերպով երևում է, որ մի վարպետ անձնակազմութիւն Կ. Պոլսից ուղղութիւն է տուել գործին: Ոչ որ այնքան ճարպիկ կերպով խնդրեցին չէ սարքում, որ քան թիւրքը, որի կանաչ դրօշակը ներշնչում է տալիս թալան յեղափոխականին: Հայկական կոտորածները մեծ ճարտարութեամբ յետաձգեցին մինչև այն ժամանակ, երբ Գաղա-

տօնի ազդեցութիւնը այլ ևս գոյութիւն չուներ անգլիական արտաքին գործերի մինիստրութեան մէջ: Եւ մենք շատ սխալ հասկացած կը լինենք այժմեան շարժման ոգին, եթէ չընդունենք թէ նա խիստապաւ ասպատակաւ է (սեպարատիստ): Թալանները բարենորոգեալ վարչութիւն չէ, որ ուղում են. նրանց ուղածը մահմեդական վարչութիւն է: Նրանք ցանկանում են թալանել ըրիտունէական լուծը և վերականգնել խաղաղ բաղադական պլուստիօր: Այն ընդհանուր խռովեալ վիճակում, երբ Կ. Պոլսի հարցը նորից պէտք է յուղվէր, սուլթանը գտնվում է այն հաճելի կացութեան մէջ, որ նա ծարիր պիտի դիտողութիւն անէ թէ պէտք է իր երկրի սահմաններում արգելի կոտորածներն ու բռնութիւնները: Մի և նոյն ժամանակ պ. Ռօկֆէլլերն էլ այնքան էլ դժգոհ չէ, որ իր լուրջ մրցակիցները օրական 400,000 ընդուն կորուստ ունեն, որով հրապարակը բաց է մնում իր համար:

Գիտատարար, ուսակական բերօղիատարներէք այնքան յայտնի սխալ չէ գործել, որքան այն քաղաքականութեան մէջ, որը նա գործ է գրել Կովկասի նկատմամբ: Անդրկովկասի թալանները դեռ ևս այնպէս յարված են Օսմանեան պետութեան, ինչպէս որ ըրիտունէաները յարված են հայ կեդեցուն: Այսպիսի մի երկրում յեղափոխութիւնը կարճ ժամանակով դուրս կը լինի ճնշել, և մինչև ճնշելը ծանր հարուած կը հասցնէ Ռուսաստանի պլուստիօրին...»

—Գերմանական «Vossische Zeitung» թերթը որ միշտ լաւատեղեակ է, իր սեպտեմբերի 11 (ն. տ.) համարում հաղորդում է, թէ Թիւրքիան մտադրել է մի յայտագիր ներկայացնել Ռուսաստանին՝ Կովկասում հայերի շարքովելու դէմ բողոքելով և աւելացնում է թէ նրա այդ քայլի մէջ մի ցուրտ ծաղր, իրօքի կայ: «Թիւրքիան, ասում է «Vossische Zeitung», իրան արդար է համարում բռնելով այն ճանապարհը, որին շատ անգամ է հետևել Ռուսաստանը Օսմանեան կայսրութեան մէջ տեղի ունեցած հայկական կոտորածների առիթով: Թիւրքիան այժմ եւրօպական մարդասէրներին դուրս է կանգնում, այն համոզումով, թէ չէ կարող ձեռները ծալած մնալ այն միջոցին, երբ հարկաւոր է հաղորատոր մարդկային էակներ են շարքովում Թիւրքիայի սահմանաւից գաւառներում: Թիւրք կատաւարութեան այդ քայլը պէտք է շնորհաւորել: Ժող է, եւ դեռ Գիտակցի (սուլթանի պալատից) տրված մի նշանի վրա թէ Կ. Պոլսում և թէ Փոքր-Ասիայում հայերին շարքեցին, բայց շարքը անմիջապէս դադարեց հէնց որ սուլթանը հաւկառակ հրաման արձակեց: Ռուսական կառավարութեան իշխանութիւնն այդչափ չէ տաքածվում, որ նշանակում է թէ Ռուսական պետութիւնը աւելի թոյլ կերպով է կառավարվում քան թէ սուլթանի պետութիւնը:

—Ֆրանսիական «Le Temps» կիսապաշտօնական թերթը իր սեպտեմբերի 9-ի (ն. տ.) համարում յատուկ մի առաջնորդող ունի La situation au Caucase (Կովկասի վիճակը) վերնագրով, որի մէջ գրում է.

«Այն, ինչ որ այժմ կատարվում է Կովկասում կարող է զարմացնել միայն նրանց, որոնք չեն հետեւել այդ երկրում տիրող ցեղական մեծ պայքարին: Կովկասն, ուր բնակվում են Ռուս, թիւրք, հրէայ, հայ և թալան, միշտ շփոթ վիճակումն է եղել: Բայց մանաւանդ հայոց և թալանների մէջ է, որ պայքարը միշտ գոյութիւն է ունեցել: Եւ դարձեալ մի թալանական ապստամբութիւն է սկզբնապատճառն այն աւերակներին, որոնց հանդիսատես են լինում մենք այսօր:

Գիւղաբնակ, կուլտուրայից զուրկ և մտաւորական տարբական աստիճանի վրա գտնվող թալանները գանգատվում են թէ նրանք ճնշված են հայերից: Գործունեայ, ճարպիկ և հարուստ հայերը երկար ժամանակից ի վեր մի քաղաքական կազմակերպութիւն ունեն, որին ծառայում են լրագիրներ և կարգապահութեան վարժ ազնւանքներ. այս կազմակերպութիւնը իր յեղափոխական ձգտումները պատճառով կասկածելի է դառել Ռուսական իշխանութիւններին աչքում: Երբ թալանները մեղադրում են հայերին թէ սրբաբաւորութեամբ գրաւել են իրանց ձեռքը և նրանց կեղեքում են տնտեսապէս, Ռուս պաշտօնեաները հակված են այդ գանգատները լսելու և ընդունելու: Եւ իբրեւ (թալաններին ցոյց տրված) այս քաղաքականութիւնը գրգռում է հայ ցեղը, որ առանց այն էլ դժբախտ է: Եթէ միւս կողմից ի նկատի ունենալ, որ թէ հայերն և թէ թալանները զինված են, որ այս վերջինս

բը սօսափում են), — դրամ 5 գործ., հեղինակութիւն իշխ. Սուրբառութիւն, թարգ. Ա. Սուրբառութիւն և 5) «Բեղովլար» — դրամ 5 գործ. և 6 պատկերով, հեղինակութիւն Գարեգին Ուսանանի:

Վերջին աղետից վնասվածների օգտին ստացանք 1) Դիլիջանից, Ա. և Ս. Սարգսյանների և Ն. Մամանյանի ձեռքով հաւաքած 37 ռուբլի. 2) Սուրբառից, բազմաթիւների մէջ Մկրտիչ Մեղիքեանի ձեռքով հաւաքած 20-ական կոպ. — 5 ռուբ. 60 կոպ.:

Շուշու վնասված հայերի օգտին ստացանք 1) Ալեքսանդրօպօլից Ծ. քան. Նալբանդեանի, Ս. Սոյեցեանի, Արս. Տէր Պողոսեանի և Յ. Տէր-Յարութեանի ձեռքով հաւաքած 512 ռուբլի. 2) Հայկ Թումանեանից, Սիմոն Արգարեանից, Ասգ. Թերզիսեանից 1-ական բ., Յ. Լալայեանից 50 կ., ընդամենը 3 բ. 50 կ.

Նախիջևանի աղետի զոհերի օգտին ստացանք Թուրքից (Պարսկաստ.) մի քանի հայերից հաւաքած, Ա. Մինասեանի միջոցով 60 ռուբլի:

Միւսիստանի կոմիտէի օգտին և կայացրել, որ օրթօքսոթիւնից ուրիշ դաւանութեան անցնելու, ինքնուրոյնը պէտք է անմիջապէս դաւանական իշխանութեան միջոցով յայտնեն նախօրէ թէ ինչ դաւանութեան են ուզում անցնել:

Մայրաքաղաքի «Пет. Вѣд.» լրագիրը լսել է, որ սեպտեմբերի վերջին ներքին գործերի միւսիստանութեանը կը յանձնվի Պետական Դոմային մասնակցելու համար Կովկասի պատգամաւորների ընտրութեան նախագիծը: Միւսիստանութեանը, անյապաղ կը ներկայացնեն այդ նախագիծը կոմ. Սոլսկու նախագահութեան տակ եղած յանձնաժողովին:

Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ դաւանութեան հոգաբարձական ընտրութեանը ժամանակ մի քանի թիւերի մասնակցութիւններ են ծագում, որոնք առիթ են տալիս զանազան դժգոհութիւնների և բողոքների: Այսպէս օրինակ, Արաւիկայում, Նիկոսեանցիները հարապետեան դարացի հոգաբարձութեան ընտրութեան ժամանակ յայտնելով Սիմոն վարդապետի և ընտրող ծխականների մէջ վէճ է ծագել, թէ ով պէտք է նախագահէ ժողովին: Յաջորդ ախ կարծիք է, որ ժողովի նախագահն ինքն է, իսկ ժողովականները այն կարծիքն են հղել, թէ իրանք պէտք է ընտրեն նախագահ: Հարկաւոր են համարում յայտնել այդ վէճի առիթով մեր կարծիքը: Ժողովը պէտք է բանալ յայտնել կամ գործադիր և յայտնել ժողովի գումարման նախագիծը կամ օրակարգը: Մնալով հանդերձ ժողովի նախագահի պաշտօնէ, նա պէտք է առաջարկէ ժողովին ընտրել իր համար առեւտրային և քաղաքական: Այսուհետեւ ժողովի վիճաբանութիւնները ղեկավարող առեւտրային է, իսկ յայտնել նախագահը լոկ հսկող և դիտող պէտք է հանդիսանալ միջամտելով միայն այն ժամանակ, երբ նկատէ, որ ժողովը չի գտնում և սահմանված օրէնքից կամ կանոններից և հարկաւոր դէպքում քաղաքական տայ օրէնքի կամ կանոնների մոտ կէտերի մասին: Ինչպէս մեզ հաղորդում են, Թիֆլիսի Սիմոն առաջնորդը այդ մտքով է լուծել և Արաւիկայի վէճը, և լուծել է միանգամայն զոհացողից կերպով:

«Մշակի» երէկվայ № 184-ում տպված յօդուտ քննարկում հայերի նուիրատուութեան ցուցակի մէջ տպված է ստացված Դահրաման Մեղրեաններից 2 բ. 10 կ., պէտք է լինի 24 բ. 10 կ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Հենց որ մի հասարակական գործիչ պակասում է, այդ պակասը կամ լաւ է ասել, կորուստը, նոյն հասարակութեան ամենքին պէտք է վերագրել: Այդպիսի մի կորուստ կրեց Պարսկաստանի Ուրմի գաւառը նախընթաց օգոստոսի 5-ին ամերիկացի դոկտոր Զօրիք Քակրաւի մահվամբ:

Գիտ երկու շաբաթ առաջ մահվան բօթը լսելով յոյս ունէի ձեռք բերել լուրի ցանկալի հերքումը:

Ո՛հ ինչքան վատ է խաբող յոյսը... Նորա-նոր եկողները, առանց քաջառութեան, ամբողջ

սանքի յուզիչ շնորհով հաստատեցին անվերապա իրականութիւնը:

Յուզարեւոտութեան օրը նոյն ամսի 6-ին քաղաքից 2 վերապահութեան վրա ամերիկական Դաւա կոչվող շէնքերի լայնարձակ բազմերը դրանք են իրանց մէջ և դուրս պարսպից մարդկանց մի քանի հազար տխրադէմ բազմութիւն, որոնց թուումն է հղել անձամբ նորին բարձրութիւն պրկից Իմամ-Կուլի Միրզան, ուսանական հիւպատոսը, ուսանց հոգեւորականութիւնը, հայերի, կաթօլիկների, եպիսկոպոսականների, գերմանական և ասորական ընդհանուր հոգեւորականութիւնը, հեռաւոր գիւղերի ժողովուրդները, ձիւնոր և հետիւտներ: Ամենքը շտապել էին իրանց երեսնամեայ երեխաւորին — սիրտի Հէքիմ-Սահաբի (այդպէս էր կոչում ժողովուրդը) անկենդան դիակին վերջնական հրաժեշտի յարգանքը տալու:

Ներքոյ, դամբանական շառերն են խօսել, բայց հանգուցեալի բազմութիւն աշակերտներից բժիշկ Ուշանա խանի և Իւրայիլ խանի արտասանածները ամենայնուրեւ է ժողովուրդական լաց է բարձրացրել:

Հիմուտ բժիշկ էր հէքիմ Սահաբը և հրաշալի վերահատ: Իմ վրկիչս էր նա: Տարիներից վեր չարագործի ինձ հասցրած մահաբեր վէրքս նա բժիշկից, և այն օրից, իմ կենդանութեամբ պարտական եմ նրան:

Նւ իր հայը, թուրքը, ասորին: Զուրկը, ծանօթ անձանք էին բժիշկ-խանութիւն հէքիմ սահաբի հոգաբարձի ձեռքերով: Կամ իր պղծաբան չէր բարեբաղի նրանց...

Տաճկական սև սարսափներից հարածական... կարօտ և հիւանդ քանի քանի հայ ընտանիքներ գիտեմ, որոնց տարիներով պատապարտւում, հոգում և սիրում էր որպէս մի խանդակաթ հայր:

Հանգուցեալի այցելութիւնը կիսովին դժբախտ էր հիւանդին. մինչև դեղեր նշանակելը՝ փաղաքանքներով, խրախոյանքով ուղի է ոյժ էր ներշնչում հիւանդին:

Զօրացնել հիւանդը առկաւին դեղեր չընդունած բժիշկ մարդի մի առաւելութիւնն է, որով օժտված էր Հէքիմ Սահաբը:

Պարսից կառավարութիւնը տարիներ առաջ բարձր գնահատելով մարդասէր ամերիկացու հասարակական ծառայութիւնները, սարթիքը բութեան առաժձան և պատուանշան շնորհեց, աստիճանի անկարօտ դօկտոր Քակրաւին:

Երանի հոգեւոր մարդասէր բժիշկ:

Թիֆլիս

Ա. Տէր-Նալբանդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

— Սեպտեմբերի 6/19—10/23-ին Լիւբեռն քաղաքում կայացաւ խաղաղութեան Համաշխարհային XIV կոնգրէսը, որի պատուաւոր նախագահն էր հելուստիական դաշնակցութեան նախկին նախագահ Կոնստանտին Կոնգրէսի ընտրութեան հիմնական առկաններից կարճաժամանակը մի քանի կարեւորները: 1) «Միջազգային դաշնակցութեան» ինչպէս, առաջարկ էլ միջ Արեւոյի, 2) «Եւրոպական գերմանական մերձեցում», 3) «Պատերազմի անտեսական պատճառները», 4) «Ինտերնացիոնալիստական և կրթութեան մի միջազգային սիստեմի կազմակերպութիւնը», առաջարկ Արեւոյի և Մոսկւի: 5) «Մի օժանդակ միջազգային լեռնային ստեղծումը: Կոնգրէսը դադարեց է և աշխատեցին կարեւորութիւն ուղղութեան հետ, ինչպէս մակեդոնական, հայկական հարցերը:

— Գ. Պօլսից հաղորդում են գերմանական թերթերին, որ թուրքական ոստիկանութեանը նորերս աղողվել է բաց անել յունական մի դաւադրութիւն Մակեդոնիայում, որը հետեւել կը պիտի է հղել:

Թուրք դիւանները Մակեդոնիայում ընդհանրապէս ունեցան յունական առաջակային մի խմբի հետ, որի միայն մի քանի գրաւոր դժուրեւները նրանց կարողացան իրանց ձեռքը գցել: Այդ դժուրեւներից մի քանիսը նամակներ են, որոնցով յունական կազմակերպութիւնը պահանջում է նախապատրաստվել ապստամբութեան համար: Բացի դրանից յայտնվել է, որ յոյն յեղափոխականների պարագլուխներ են նշանակված Մոնաստիրի և Դրեքէնի միտրօպոլիտները:

Գերմանիայի Համաբուրգ ազատ քաղաքում նորերս տեղի ունեցաւ կրթութեան հարցի մասին համաժողովը: Ինչպէս որ Կոնգրէսը, որին մասնակցում են բազմաթիւ գերմանական գիտնականները, ընդհանուր հիմնքներից:

— Մի քանի օր սրանից առաջ Գերմանիայի Համաբուրգ քաղաքում կայացաւ իրաւունքների կոնգրէսը:

— Գ. Պօլսից հաղորդում են եւրոպական թերթերին, որ թուրք ծովահէնները վերջերս աւելի եւտանդով սկսել են իրանց արշաւանքները Կարմիր ծովի վրայ և զգալի քանակներ են հասցրել մասնաւոր անգլիական և իտա-

լական շոգենաւերին: Այդ առիթով վերոյիշեալ երկու պետութիւնների դեսպանները բողոքեցին սուլթան Աբդուլ Համիդին:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՍԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՍԵ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆՏԵՑ

13 սեպտեմբերի ՕրիշՍՍԱ: Գնեւրալ Կոնստանտինովի մարմինը կուղարկվել Պետերբուրգ հողին յանձնելու համար:

Այստեղ հասաւ և մէկնեց Բաթում մի խումբ, բաղկացած Ֆրանսիական և անգլիական ակցիոնեւրական նաւթարդեւանքական ձեռնարկողներից: 2ը նայելով վնասին, նրանք մատգէր են գործը շարունակել, որի համար պահանջում են ուսանց կառավարութիւնից իրանց ստացվածքի ամբողջութեան երաշխաւորութիւն Բազում:

ՍԻՄԵՆԲՐՈՊՈՒ, 13 սեպտեմբերի: Սիմֆերօպօլի գեմատիւն նախագիծ կազմեց՝ միջնորդելու, որ կանանց ևս արվի գեմատիւն ընտրողական իրաւունք:

ՆԱՆՏԱ, 13 սեպտ: Գլխաւորապէս Մօսկւայում տարածված լուրերը «Россия» հիւրանոցից արքային և Նալբանդում տեղի ունեցած շարքի մասին բողոքովին հիմքից դուրկ են:

Հարաւային Կովկասում ամեն ինչ խաղաղ է: ՎԻԵՆՆԱ, 13 սեպտ: Այսօր բացված բէյ-խարաւի նիստին Գառնը, ընդհանուրով սօցիալիստների «ընտրողական օրէնքի գող» աղաղակներով, ասաց, որ ունեւարական հարցի վերաբերելու կառավարութիւնը պահպանում է այն տեսակէտը, որ հիմք է ծառայել 1867 թ. համաձայնութեան համար: Աւստրիան չէ կարող այլևս զիջումներ անել, բայց և այնպէս տէրութիւնը համաձայն է ընկնելու 1867 թ. համաձայնութիւնը: Նաեւ խիստ կերպով պահպանում է այն սկզբունքը — խառնվել Ունեւարիայի ներքին գործերի մէջ և այդ պատճառով էլ արդարացի չէ ձանձուղում Ունեւարիայի՝ Աւստրիայի գործերի մէջ միջամտել:

ՇԱՆԴՀԱՅ, 13 սեպտեմբերի: Զինաստանը եւտանդուն կերպով կատար է ածում զինուորական և ծովային վերակազմութեան սիստեմ: Հաստատված է մի ընդհանուր շտաբ, որի իւրաքանչիւր անգամ զինուորական կրթութիւն է ստացել Նապոլիում: 5 ասորվայ ընթացքում չինական կայսրութիւնը կը բաժանվի 20 զինուորական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը կը պարունակէ իր մէջ 13 նահանգներ: Պետութիւնը հաշուում է հասցնել իր զորքի թիւը մինչև 1910 թիւը՝ մօտ 1 միլիոն լաւ կրթված զորքի:

ՎԱՇԻՆԴՏՈՆ, 13 սեպտեմբերի: Զինական կառավարութիւնը պաշտօնական բողոք է յայտնում հաշտութեան պայմանագրի երկու կէտերի դէմ — նաեւ գտնում է Մանչուրիան թողնելու համար նշանակված 18-ամեայ ժամանակամիջոցը՝ չափազանց երկար և պահանջում է կիսել այդ ժամանակամիջոցը, և դատարկութեան յետոյ երկաթուղային գծի պահպանութեան համար որոշած 15,000 թիւը համարում է չափազանց մեծ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 13 սեպտեմբերի: Ժողովուրդական լուսնաւորութեան վարչութիւնները հրաման արձակեցին, որ վերոյիշեալ վարչութիւնների մէջ ստորին ծառայողների տեղերը արվին զինուորապէս հաշմանդամ և վերաւորված զինուորականներին:

14 սեպտեմբերի ՊԵՏԵՐԲՈՐԳ: «Կառավ. Տեղեկագրում» հրատարակված է նաւատորմիւղ ուժեղացնելու մասին կազմված առանձին կոմիտէի գումարների գրութիւնը: Մինչև սեպտեմբերի 1-ը նաւերնեւր եղել են 10 միլիոն: Առ ընթացիկ սեպտեմբերի նուէրնեւր եղել են 10,084,951 ռուբլի: Ծախսված է 18 ականային կրէյսերներ և 3 ընդամենն մակոյկներ պատրաստելու համար 10,226,306 ռուբլի:

Հատ լրագրական տեղեկութիւնների, կոմս Սոլսկու առանձին խորհրդակցութեան ենթա-յանձնաժողովը ներկայացրեց առանձին խորհրդակցութեան քննութեան հետեւալ առաջարկութիւնները, սահմանված կարգով հաստատված ընկերութեան հրապարակային ժողովի նախագահը, երբ այդ ընկերութեան գործունէութեան շրջանին չեն վերաբերում պետական, հասարակական և տնտեսական հարցերը, իթէ յանցաւոր է գտնվում թող առաջով ընկնի դատողութիւններ և որոշումներ այդ հարցերի մասին, պատժվում է բանտարկութեան երեք ամիսից ոչ աւելի ժամանակով կամ դրամական տուգանքով 300 ռուբլուց ոչ աւելի: Այդպիսի ժողովին մասնակցողը, յանցաւոր վերոյիշեալ հարցերի մասին որոշում

ներ կայացնելուն մէջ, ինչպէս և այն անձինք, որոնք յանցաւոր կը լինեն շարունակելու մասնակցելու այդպիսի ժողովին, նրա վիճակման մասին կարգադրութիւն լինելուց յետոյ պատժվում են բանտարկութեամբ մի ամսից ոչ աւելի կամ դրամական տուգանքով հարկը բուրուց ոչ աւելի:

Պետերբուրգի ընդհանուր-նահանգապետը տեղեկացրեց Պետերբուրգի համալսարանի պրօֆէսորների խորհրդին, որ փետրվարի 7-ին կայացած ժողովին նախագահ Զամիատինը արձակված է:

Նմադրի՝ ԱՆԷՔՍԱՆԻՐ ՔԱՆԱԹԱՐ Հրատարակչներ՝ ԲԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՍԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ-Ր Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Վերադառնալով վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը իր նոր բնակարանում — Սերգիսկայա փող. ա. № 15 (Сербск. ул. № 15) (հ. 2.) 1—10

Բ Ժ Ի Շ Կ

Լեռն Բաւոյեան

Վերադառնալով Կովկասեան Հանրային շրբերց և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը: Միջանցանական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ: Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ: Միջայեւան փողոց, № 55: (ա. օ. յ. օր. մ.) 5—30

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԳԵԱՆ

Մալսիկն օրդիւնատ Մօսկւայի համալսարանի կիցիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միջանցանական, սիֆիլիս և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւն ամեն օր 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բալչիկի փող. № 1, «Գոթարի կոմանդի» դիմացը, տէլեֆօն № 11. (ա. օ.) 9—10

Բ Ժ Ի Շ Կ

Լեռն Օհանջանեան

Մասնաւոր միջային, վիւնեւրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններ: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկենդ Գօրովսկի պրօսպեկտի և Կարեւորային փողոցի, առան թաժամեանի: Մուտքը Կարեւորային փողոցից № 2. (ա. օ.) 21—300

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ Ժ

Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, երեխաներ հրապարակ, առան Արդուքեան, բնակարան Լալայեանցի բնակարան:

Բժիշկ Գր. Մակարեան

Վերադառնալով նորոգեց հիւանդների ընդունելութիւնը ներքին և երեխայից հիւանդներին, ամեն օր ժամը 4-ից մինչև 6 երեկոյեան: Միջայեւան փողոց, Բերեկի տուն № 134, տէլեֆօն № 907. (հ. Կ. չ.) 8—10

ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՇԻ

Սօֆիա Ի. Գեորգիու-Լօշկ

Տեղափոխվել է Կազնայեյսկի փողոց № 7, ունեն իշխ. Թումանովայի, Ալեքսանդրեան այգիներից (հ.Կ.Կ.) 43—100

Մանկական պարտեզ,

Դպրոց եւ պանսիօն

Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

БЕДУТОВСКАЯ, № 30.

Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում միջնակարգ դպրոցներ մանուկ. համար: (11,13,14,15,16,18,20,23,25) 2—10

ՆԱԻԹԵԻԱՆԻ Լ. ԶԱՆԳԵՉՈՒՐԻ

գաւառները դնալու համար երեք ամիս ժամանակով

Պանսիօնում եւ Բժիշկներ

և Ֆ Է Լ Դ Շ Ե Ի Ն Ե Բ

Ռոմիկ կը արվի բժիշկներին՝ ամսական 300 ռուբլի, ձանապարհածախս 50 բ., ֆիդէլիտե՝ 70 բ. և ձանապարհածախս — 25 բ.: Դիմել մինչև սեպտեմբերի 15-ը Բժիշկ. Կ. Մանֆանեանին (Норо-Бедутовская. д. № 1):

Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ հրաւիրում է բոլոր այն անձերին, որոնք կը ցանկանան իրանց վրա առնել ուղարկվային և նրա ենթակայ ըլլող հաստատութիւններին վառելափայտ մատակարարել, բարեհաճել զալ ուղարկել բնակարան մասնակցելու տնտրելու, որը կը լինի սեպտեմբերի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին: (ա. օ.) 3—3

2-3